ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի փետրվարի 12-14-ը Բելգիայի Թագավորություն (մայրաքաղաք Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Քրիստինե Ղալեչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Բելգիայի Թագավորություն ՝ մայրաքաղաք Բրյուսել, 2024թ. փետրվարի 12-ից 14-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Բելգիայի Թագավորություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված բարձրագույն քաղաքական մարմնի՝ ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի հերթական 5-րդ նիստին:

6. **Քննարկված թեմաները.**

Բելգիայի Թագավորության մայրաքաղաք Բրյուսելում տեղի ունեցած՝ ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված բարձրագույն քաղաքական մարմնի՝ ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի հերթական 5-րդ նիստին քննարկվել են բարձր մակարդակի օրակարգային հարցեր՝ ուղղված տարածաշրջանի խնդիրների ընդլայնմանը, քաղաքական երկխոսություններին և բարեփոխումներին, ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքներին, ինչպես նաև ՀՀ-ԵՄ տնտեսական, առևտրային և ոլորտային համագործակցությանն ու հարևան երկրների հետ հարաբերությունների կարգավորմանը և հումանիտար այլ խնդիրների:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստի շրջանակներում բարձրացվել և քննարկվել են ՀՀ-ԵՄ համագործակցության միջոցով ավելի առաջադեմ ճանապարհային ցանցի արդիականացման, որակի բարելավման ճանապարհ ձևավորելու և զարգացնելու անվտանգ, ծախսարդյունավետ և էկոլոգիապես անվնաս ճանապարհային ցանց, որը կնպաստի ներպետական և միջազգային փոխադրումների աճին, նոր շուկաների ձևավորմանը, կխթանի ներքին և արտաքին առևտուրը համաշխարհային շուկաների հետ, կնպաստի տարածքային համաչափ զարգացմանը՝ առանցքային ոլորտներում:

Քննարվել է նաև հյուսիս-հարավ ճանապարհահատվածի ռազմավարական նշանակություն ունեցող՝ մասնավորապես տրանշ 4 Սիսիան-Քաջարան հատվածի կառուցման և տրանշ 3 Գյումրի- Բավրա հատվածի վերակառուցման հարցերը՝ ընդգծելով երկրի համար ծրագրի իրականացման կարևերությունն ու աջակցությունը:

Անդրադարձ է կատարվել նաև մի շարք հիմնարար բարեփոխումների՝ տրանսպորտի և լոգիստիկայի ոլորտում, ինչպես նաև կլիմայի փոփոխությանը՝ նշելով, որ երկրի ճանապարհային ցանցը խոցելի է կլիմայի փոփոխության և բնական վտանգների հետևանքով առաջացած աղետների ազդեցությունից, ինչպիսիք են ճանապարհների մակերևույթի վաղաժամ վատթարացումը և լանջի անկայունությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կառավարությունը նպատակ ունի ուժեղացնել կլիմայի հարմարվողականության գործընթացները՝ իրականացնելով կլիմայական ռիսկերի գնահատումներ, մշակելով հարմարվողականության ազգային ռազմավարություն, հատկացնելով ռեսուրսներ և իրականացնելով հարմարվողականության նորարարական միջոցառումներ, որի հաջող իրականացումը կպահանջի ԵՄ-ի լայնածավալ աջակցություն, ներառյալ ֆինանսավորում, որտեղ արդյունավետության տեսանկյունից դիտարկելով՝ անհրաժեշտ կլինի նաև տեխնիկական աջակցություն այլ միջազգային կազմակերպությունների կողմից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքով՝ ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ԵՄ-Հայաստան Գործընկերության առաջնահերթությունների իրականացման հարաբերությունները կխթանեն և թույլ կտան շարժվել դեպի ԵՄ-Հայաստան գործընկերության ավելի հավակնոտ օրակարգի՝ ստեղծելով մեծ հնարավորություններ ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման և ընդլայնման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

16.02.2024թ.